

# ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՑ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՅՐԱՊԵՏԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՇԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ

## (ԺԴ.-Ի. Դ.Դ.)

ՀԵՂԻՆԷ ՄԿՐՏՉԵԱՆ  
heghmik@yahoo.com

### ՄՈՒՏՏՔ

Սուրբ Վայրերում Հայ Եկեղեցու կուսանոցների բացակայութեան՝ պարագայում ուշագրաւ է մայրապետերի առկայութիւնը Երուաղլէմի Ս. Հրեշտակապետաց վանքում: Նրանց ծառայութեանն առնչուող հարցերի մասին մեզ յայտնի աղբիրները թուագրուում են ԺԴ. դարով եւ հասնում մինչեւ նորագոյն ժամանակներ:

Հայ միանձնուիկիների ներկայութիւնը Սուրբ Վայրերում ծգուած է դարերի խորը: Կան բազմաթիւ վկայութիւններ՝ ծեռագիր մատեանների յիշատակարաններում: Առաեւ վաղ շրջանի աղբիրներում նրանք յիշատակուում են «հասատատոր» եւ «հոգեսոր մայր» մակղիրներով: Առաջինը հաստատապէս ենթադրում է միանձնական վիճակ, իսկ երկրորդը ենթադրել է տախիս վանականների հանդէպ այս կանանց մայրական խնամքի մասին: Այստեղից էլ, թերեւս, յետագայում նրանց տրուած «մայրապետ»<sup>2</sup> անուանումը, որով եւ նրանց ներկայութիւնը ամրագրուած է 1880ին ընդունուած Երուաղլէմի Սրբոց Յակոբեանց միարանութեան կանոնադրութեան մէջ՝ իրեւ միաբանութեան անդամներ<sup>3</sup>: Կանոնադրութեան յետագայ մշակուաններում սոյն տողը շարունակուել է պահպանուել եւ առ այսօր ջնջուած չէ կանոնադրութիւնից, թէեւ Երուաղլէմի Ս. Առողուու անցեալ դարից յետոյ այևս մայրապետոր չկան:

Ովեր՝ էին այս մայրապետերը եւ ի՞նչ յանձնառութիւն ունին Երուաղլէմի հայկական վանքերում: Այս յօդուածում մենք կը փորձենք պատասխան տալ այս հարցերին:

Հայ պատմագրութեան մէջ դեռևս վաղ քրիստոնէութեան ժամանակներից յայտնի են իրենց բարեպաշտական գրդերով աչքի ընկած մի շարք իշխանազոնն կանայք, որոնց ճգնակեցութեամբ իրենց կեանքն աւարտել են Երուաղլէմուն:

Մովսէս Խորենացին, իր Պագմոնթիւն Հայոցուած իրեւ հայ ներկայացներով դեռևս առաքեական ժամանակներում թագաւորած Եղեսչայի Արքար<sup>4</sup> արքային, նրա կնոջ՝ Հեղինէ թագուհու մասին գրում է.

Այս Հեղինէ զարդարեալ հաւատովք, որպէս եւ զայր իր Արքար, ոչ հանդուրժեաց թագիկ ի մէջ կուապաշտիցն. այ չոգաւ յերուաղլէմ յատրս Կողայիտայ, ի տվին՝ զոր մարգարեացան Ազարու. եւ տուեալ զամնայն գանձս իր յեգիպտոս՝ գնեաց ցորեան բազում յոյժ եւ բաշխեաց ամենայն

կարօտելոց. որում եւ վկայէ Յովսեպու. որոյ եւ շիրիմ<sup>5</sup> նշանատը կայ առաջի դրանն յԵրուսաղէմ մինչեւ ցայսօր ժամանակի<sup>6</sup>:

Բարեպաշտ թագուհու այս կերպարը միջնադարեան հայ մատենագրութեան մէջ դարձել է Երուսաղէմում սրբակեաց ապրած տիկնոց իրօրինակ տիպար: Այսպէս, ԺԴ. դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին հաստատը այս թագուհու հետ է համեմատում Երուսաղէմում ճգնութեամբ իր կեանըն աւարուած հայշի իշխան Հասան Զայաի մօրը, որն ամուսնու մահից յետոյ «չոզա նա ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, եւ զամս քագումս անդ կացեալ մեծաւ ճգնութեամբ, զարմացուցանէր զամենայն տիսողսն եւ զոտոցն. քանզի ծախսայ զամենայն գոյս իր՝ զոր ունէր՝ յաղքալուն եւ ի կարօւեալս՝ նման Հեղինայ կնոցն Արզարու, եւ ինքն ծեռագործի իրով կերակրէր. եւ անդէն մեռա, զոր Ասկուած փառատրեաց գիտաւորիչն իր, լոյս կամարածե կացեալ ի վերա գերեզմանին՝ առ ի յորդորել զայս ի նոյն բարեգործութիւն»<sup>7</sup>:

Տիգրան Սաւալանեանցը նոյն Հեղինէ թագուհուն է նմանեցնում Կիլիկիի վերջին թագաւոր Լեւոն Է.ի կոնց՝ Մարիամ<sup>8</sup> թագուհուն ու դստերը: Գեղարտուստական ճոխութիւն հաղորդելով իր գրուածքին, Սաւալանեանցը նշուն է որ եգիպտական գերուսիհաց յետոյ հաստատուելով Երուսաղէմում, նրանք Հեղինէ թագուհու նման ծառայում են սուրբ վայրերու, քարի օրինակ դառնում հաստատը կանանց համար եւ այսուհետ էլ կնքում իրենց մահկանացուն՝ թաղուելով Ս. Յակորեանց տաճարի մէջ<sup>10</sup>:

Իսկ Լեսոփի Երուսաղէմն մեկնելեն նոր՝ Մարիամ թագուհին ու աղջիկը Բեննա ցմահ կը մնան Ս. Յակորեանց վանքին մէջ, եւ Եղեսիոյ Հեղինէ ոշխոյին նման Ս. Տեղերոն կը ծառայեն<sup>11</sup>:

Պատմական առումով Երբեմն վիճելի վերոյիշեալ վկայութիւնների կողին Սուրբ Վայրերում Հայ Եւենեցու միանձնուուիհիների կամ հաստատը կանանց մասին առաւել վաւերական տեղեկութիւններ են փոխանցում ծեռագրերի յիշատակարանները<sup>12</sup>: Ուշագրա աղբիր են նաև Երուսաղէմի հայկական գերեզմանոցների տապանագիր արձանագրութիւնները:

Հաստատը կանանց մասին ամենավայր վկայութիւնները հանդիպում են ԺԴ. դարի ծեռագրերի յիշատակարաններու: 1316ին ընդօրինակուած «Ճաշոց»ի գրիչ Ստեփանոս Երկայնը խնդրում է յիշել «գրնակիշս մեծահուշակ Սր. Ռիփրին Սր. Յակորայ, զպակուելի քահանայսն, զպակեշու եւ զողորմած հասարաւորն, զճնազգեաց եւ զխոնարի ոգի կրաւանատրըն...»<sup>13</sup>:

Նրանց հիմնական ծառայութիւնը, ըստ յիշատակագիրների, վանականներին սպասաւորեն է: Բերենք միքանի օրինակ:-

1331ին Երուսաղէմի Ս. Յակոր վանքում ընդօրինակուած Աստարանի գրիչը՝ նոյն Ստեփան Երկայնը, խնդրում է յիշել ծեռագրի

պատուիրատովին՝ «պարուական քահանայն Վարդ իշխան», ինչպէս նաեւ «հոգեսոր դսքերն իրոյ Շաքար հասարատրի», որ «աշխափեցաւ յոյժ կլոկել թիսրոյն եւ որը սպասաւորեցին մեզ ի պէտք մարմնաւոր»<sup>14</sup>:

Ներսէս Կրակցին, 1334ին Երուսաղէմի Ս. Ստեփանոս վանքով ընդօրինակած «Ճաշոց»ում խնդրում է յիշել «հոգեսոր մարտ Քրիստոնէի, եւ իր ընկերոջն Թագուհի, որ խիսր աշխափեցան ի հետ հացի»<sup>15</sup>:

Երուսաղէմի Ս. Յակոբ Եկեղեցում Մանուկ արեղայի 1417-19ին ընդօրինակած «Ճառընտիր»ների յիշառակարաններում գրիչը Երախտագիտութեամբ յիշառակում է «հոգեսոր մօրն իմ Թանկոսուր»<sup>16</sup>, «Ուկիկանթեղ հասարատրին»<sup>17</sup>, «Տափկի մայր ապաշխարողին, եւ միս ապաշխարողին, եւ ծնողաց նոցա, որ մեզ շար սպասաւորութիւն արարին»<sup>18</sup>:

1424ին Երուսաղէմի Ս. Փրկիչ Վանքով ընդօրինակուած ձեռագրի գրիչ Յովիհաննէս արեղան ի թիս այլոց խնդրում է յիշել «ըստ հոգոյ մայրերս մեր, որ սպասաւորին մեզ ըստ պիտոյից մարմնոյ...»<sup>19</sup>:

Ուշագրաւ է նաև 1422ին Երուսաղէմուն ընդօրինակուած «Յայսմատրք»ի յիշառակարաններից մէկը, որը վկայում է Ս. Աստուածածին գերեզմանին կին լուսարարների առկայութիւնը: Գրիչ Թորոս արեղան խնդրում է յիշել «Ասպոտածօնին սուրբ գերեզմանին լուսարարացն՝ Կաֆացի Մարիամեացն, զի ինձ Թորոս գծողիս հետ բազում աշխարանն կրեցին»<sup>20</sup>:

Այսպիսով, սուրբ վայրերում, առնուազն ԺԴ. դարից սկսած, տեսնում ենք հաւատաւոր կանանց ներկայութիւնը: Նրանց ընակութեան վայրը, ինչպէս յուշում են ԺԴ.-ԺԷ. դարերի յիշառակարանները Ս. Հրեշտակապետաց վանքն է<sup>21</sup>. «Բնակին աստ պառաւուքը յաշխարիկ հրաժարեալք, եւ կամ կոյսր մայրապետը, որ եւ ի մեծ աթոռոյս ընդունին զիղգեսահիկ կերակուրն»<sup>22</sup> Նրանց մասին գրում է ԺԸ. դարի վարդապետերից Հաննա (Յովիհաննէս) Երուսաղէմցին:

Ս. Հրեշտակապետացի հաւատաւորները, ըստ նոյն աղքիւների, իհմնականում հոգում են վանականների կենցաղային հոգսերը: Նրանց ծառայութիւնը, սակայն, չի սահմանափակուած միայն այսքանով: Հանդիպում են նաեւ լուսարարութեան պաշտօնի կոչուած կանայք, ինչպիսիք են Ս. Աստուածածին լուսարարները:

Կանանց նմանատիպ ծառայութիւնները վանքերում՝ սակայն, նորութիւն էին Հայ Եկեղեցում. դրանք հակասում էին նախկինում ընդունուած Եկեղեցական կանոններին:

Մասնաւորապէս, յայտնի է կին լուսարարների հանդէպ Հայ Եկեղեցու մերժողական կեցուածքը պատմական առաւել վաղ ժամանակներում:

Այսպէս, ԺԱ.-ԺԲ. դարերի մատենագրի Մատթէոս Ուտիայեցու վկայութեամբ՝ Երուսաղէմում

ի թուականութեանն Հայոց յամի ՇՇ (1101-1102) եղեւ ահատը եւ իրաշալի նշան ի սուրբ քաղաքն Երուսալէմ վասն զի սովորական էր վառման րուսոյ սուրբ գերեզմանին Քրիստոսի Աստուծոյ մերոյ, արգելեաւ եղեւ, ոչ վառեցա յատր շարաթու, այլ մնացին կանթեցը առանց վառման եւ կացեալ մինչեւ ի միաշաբաթին կիրակէին<sup>23</sup>:

Պատճառը, ինչպէս նշում է Ժամանակագիրը, ֆրանկների մեղատր վարքն էր, քանի որ կանանց էին տուել Ս. Գերեզմանի սպասաւորութիւնը.

Եւ ի վերայ այսր ամենայնի զկանայս կացուցանեին սպասաւոր սրբոյ Գերեզմանին Աստուծոյ եւ ամենայն ուխտիցն, որ էին յերուաղեմ եւ էին այն ամենայն մերք մեծամեծք առաջի Աստուծոյ. եւ զշայ եւ զշոռոմ, զԱսորի եւ զՎրացի մերժեցին յամենայն ուխտիցն: Եւ յորժամ տեսին զայս ահատը նշանս յանդիմանութեան ազգին Փռանգաց, ի բաց մերժեցին զկանայսն ի սպասաւորութենէ սուրբ ուխտիցն, որ յերուաղեմ, եւ զամենայն ազգ կացուցանեին յիշ ուխտուն<sup>24</sup>:

Նոյնը նշում է նաև ԺԳ. դարի մատենագիր Միսիթար Այրիվանեցին իր ժամանակագրութիւնում. «Յաւուր ճրագալուցին ոչ վառեցաւ լոյսն յերուաղեմ, զի փոռանկն զսպասաւորութիւնն կանանց էր լուսեար»<sup>25</sup>:

ԺԵ. դարում, սակայն, կին լուսարարների հանդէպ Հայ Եկեղեցու վերաբերունըն այլ է: Այս մասին է վկայում նաև Հացունին:

Անկիրիոյ վանաց յիշատակագրին մեջ հայ բարերար մը 1475ին կը սահմանէ՝ որ իշ նոտիրած դրամագիրին եկամուտը տեղոյն Եկեղեցոյ լուսարարին հատուցովի. «թէ կարգատրներէն, թէ աշխարհականներէն, թէ հաւատաւոր կիներէն՝ ով որ յիշին լուսարար», որոնց անխտիր կը տրուէր պաշտօնէ: «Ըն կը յիշով նաև «Եկին մաման»՝ որ սպասաւոր էր Սր. Աստուածածնին»<sup>26</sup>:

Ինչ վերաբերում է վանականներին կանանց սպասաւորութեանը, ապա այն հակասում էր Ներսէս Մեծի սահմանած կանոնին:

Դեռևս Դ. դարում սահմանուած այդ կանոնը («Կանոնը Ներսէսի Կաթողիկոսի եւ Ներշապիոյ Մամիկոննից Եպիսկոպոսի», կանոն ԼԳ.) արգելում էր արական վանքերում կանանց սպասաւորութիւնը՝ իբրև հացրուխ, կովկիթ կամ խնոցահար.

Եւ մի՛ ամենեւին. որպէս լուար, հացարար, եւ կովկիթ կամ խնեցահար ի վանսն տանել կին մարտ, զի թէ ուր չէր նմա հնար մտանել՝ կործանեաց զմարդն, ապա զիւսոն զինչ իսկ առնէ<sup>27</sup>:

Մինչեւո, ինչպէս վկայում են ԺՂ.-ԺԵ. դարերի ծեռագրերի բազմաթիւ յիշատակարաններ, այս շրջանում ոչ միայն Երուաղէմում, այլև բազմաթիւ այլ արական վանքերում կանանց սպասաւորութիւնն արդէն տարածուած Երեւոյթ էր:

ԺՂ. դարում նման Երեւոյթի ի յայտ գալը Հացունին կապում է Հայ Եկեղեցում կուսանցների կամ հաւատաւորների վերահաստատման հետ:

Սակայն վանքերում սպասաւորող կանանց մասին նա նշում է, որ «կանոնաւոր կուսաններ չեն ադոնք, այլ ազադ կամ կէս հասպատոր՝ մայրապետ կոչմամբ»<sup>28</sup>:

Նման եզրակացութեան պատճառը վանքերում ծնունդ առած գայրակղութիւններն էին, որոնց մասին Հացունին գրում է.

Կուսաստանաց կամ հաստատուց վերահաստատութեան հետ ծայր կու տան զեղծումներ ալ, որոնք զգայի են մասնաւոր ժԴ. դարուն: Կան այդ կուսաններէն, որոնք ծեռով եւ հիմայ անուամբ մայրապետք, կը յաճախէին եւ ծառայութիւն կամ տեսակ մը տանտիկութիւն կ'ընէին արանց վանքերու մէջ, պատճառ տալով բնականապէս գայթակղութեանց<sup>29</sup>:

Արական վանքերում տարածում գտած խոտելի այդ երեւոյթի մասին է վկայուա 1444ին Այրիվանքում ընդօրինակուած «Յայսմատրք»ի յիշատակագիրը՝ նշելով, թէ ինչպէս ծեռագրի պատուիրատու Սիմէռն Շարունապետը (Սիմէռն Տարեւացին) «մեծաւ յուսով եւ եռափափազ սիրով մկաս նորոգէի եւ զարդարել զվանորայս Արարագեան նահանգին, որ խախտեալ կային ի սահմանաց եւ ի կրօնից յառաջին հարցն... կանոնս եւ օրէնս հասպատեաց: ...Այլ եւ զվանքն պարսպեաց եւ ամրացնյու որոշեաց ի յաշխարհականացն, զի արելայ ի շորջ պապի կողմն բնակեսցէ, եւ սանամայր մի արացցէ բոյրաքոյր եւ մայրաքոյր»<sup>30</sup>:

Թերեւս նման գայթակղութիւններից գերծ չեն նաեւ Երևասահէմի հայկական վանքերը: Հացունին մատնանշում է Կրակեցու գրութիւնը՝ Վերցուած 1335ին Երուսաղէմի Ս. Հռեշտակապետաց վանքում ընդօրնակած ծեռագրից, որով «ծածով հեգնութիւնը կ'ուղղէր իր հայ վիճակակցաց. «Ո՛վ Եղբարք, վկայ է Ասպրուած՝ որ ի ճառից գրելն ոչ մայրապետ ունիմ եւ ոչ բոյրապետ. ու շաբար ցամաք հացով»: Կը հետքի՝ որ մայրապետացր գործն էր հոգալ ու կերակրել վանականները. եւ այն ոչ հասարակութիւնը, այլ զանոնք միայն՝ որոց հետը կապուած էին»<sup>31</sup> Եզրակացնում է Հացունին:

Այսուհետեւ, Հացունու գնահատականը կարելի է համարել չափա- զանց խիստ՝ սեւոուած քացառապէս քացառական երեւոյթների վրայ: Արական վանքերում սպասաւորող կանանց ներկայութեան պայմաններում, անշուշտ, կարող էին տեղ գտնել նաեւ մատնանշուած զեղծումները: Դրանք, սակայն, ամբողջութեամբ չեն կարող ստուերել Երուսաղէմի Հայոց Պատրիհարդութեան հովանու ներքոյ իրենց ծառայութիւնն իրականացնող հաստատոր այդ կանանց Երախտիքը, որի մասին վկայում են շատ յիշատակագիրներ:

Միաժամանակ կարող ենք նշել, որ առկայ մի շարք աղբիւներ թոյց են տալիս Ենթադրելու նաեւ, որ հաստատոր կանանց կամ մայրապետերի համար սահմանուած են եղել որոշակի կանոններ ու չափորոշչներ:

Նախ վերադառնանք Երոսաղեմի Մորոց Յակոբեանց միաբանութեան կանոնադրութեանը: Կանոնադրութեան առաջին յօդուածը Ներկայացնում է միաբանութեան կազմը, որը եղբափակում է «մայրապես քոր» տողով՝ յաջորդելով քրծագգեաց Եղբայրներին<sup>32:</sup>

Հարկ է նշել, սակայն, որ այս կանոնադրութիւնը չի յստակեցնում մայրաբետերի հետ կապուած շատ հարցեր՝<sup>33:</sup> Այն սահմանում է միայն նրանց քանակը միաբանութեան կազմում՝ առավելագույնը 30 եւ միաբանութեանն անդամագրութեան տարիքային շէմը՝ 30-40 տարեկան, ինչը նախկինում կարող էր եւ շատ աեցի ցածր լինել: Կանոնադրութեան մէջ մայրապետերին վերաբերող այլ մասնաւոր դրոյթներ սահմանուած չեն: Իսկ կանոնադրական այնպիսի հարցեր, ինչպիսիք են միաբանութեանն անդամագրութեան կամ հեռանալու (հակականոնական վարքի դէպքում հեռացութելու) ընթացքը, պարտականութիւններ եւ իրաւունքներ ստանձնելը, ընդհանուր դրոյթներով սահմանուած են միաբանութեան բոլոր անդամների համար՝ առանձին բացառութիւններով:

Միանշանակ է, սակայն, որ սուրբ Վայրերում հաւատաւորների կամ մայրապետերի հաւաքականութիւնը Ենթարկուել է չզրուած այլ պահանջների եւ, որոնք արտացոլուած չեն կանոնադրութիւնում:

Մասնաւորապէս, իբրև միանձնական կենացին նոփրուած կանայք, հաւատաւորները կամ մայրապետերը կարող էին լինել կոյս կամ այրի: Այս մասին վկայում է ինչպէս Ժ. դարի Հաննա Վարդապետու, նրանց մասին նշելով՝ «պառաւունք յաշխարհէ հրաժարեայք, եւ կամ կոյսք մայրապետք», այնպէս էլ յետագայ բազմաթիւ այլ ժամանակագիրներ: Գալով նոր ժամանակներ՝ արդէ յիշտակել 1944ին Երուսաղեմի պատրիարքական տեղապահ Կիրտէ Շ. Կրտ. Խորակէլեանի Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուղարկած զեկուցագիրը, որտեղ մայրապետերին վերաբերուող տեղեկութիւններում կրկին նշում է նրանց կոյս կամ այրի լինելը.

Ասոնք բարեպաշտ եւ Եկեղեցատէր կիներ են տարիքով միջինէն վեր, վիճակու որբեայրի կամ կոյս. Կընդունուին ցենանս վանքին ծառայելու յանձնառութեամբ: Կը բնակին Ս. Հռեշտակապետաց վանքին մէջ տեսչի հսկողութեան տակ: Վանքէն դրս աշխատներ արտօնեալ չեն: Կը կատարեն միաբանութեան եւ ժառ. վարժարանի գգեստոց լուացքի եւ կարի աշխատանքները<sup>34:</sup>

Ենթադրեի է նաեւ, որ դեռեւ ԺԴ. դարից հաւատաւորները միանձնական կենացի են նոփրուել Եկեղեցու կրոլից սահմանուած որոշակի կարգով: Մասնաւորապէս, նման կարգի գոյութեան մասին է վկայուած Երուսաղեմի Ս. Յակոպ Վանքում 1358ին ընդորինակուուած Հին Կրտակարանի յիշատակարանը, որտեղ խօսւամ աշխարհից հրաժարուած եւ հաւատաւորութեան կարգ ստացած միանձնուիու մասին:

...եւ գիղգեւոր քոլից սոցա զՄեծիաթոն, որ բազում ժամանակս հրաժարեալ էր յաշխարհէ, և ստացեալ զկարգ հաստատորութեան, և էր սրբանեալ է առարինի, ողորմած ի տուր, և սիրող աղքատաց եւ տնանգաց, և բարի խոստովանորեամբ փոխեցաւ առ Քրիստոս, և բարի յիշառակ եթող յաշխարի. ըստ Աւետարանին, թէ երանի որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընտանից նորա յերուաղեմ<sup>35</sup>:

Ինչպիսի Եկեղեցական արարողութիւն է կատարուել ԺԴ. դարում հաստատորութեան կարգ ստացող կանանց համար՝ դժուար է ասել: Մեզ հասած տեղեկութիւնները խիստ սակաւ են ու ոչ-բարար այդ մասին որոշակի պատկերացում կազմելու համար:

Իր եզակիութեամբ առաւել ուշագրաւ է Երուաղեմի Ս. Յակոբեանց միարանութեան ծնուազրատանը պահուող ԺԵ. դարի ՀՊ 2291/70 Մաշտոցում Ներառուած «Օրինութիւն Կուսանաց» կարգը<sup>36</sup>: Այն որոշակիորեն վկայում է, որ առնուազն ԺԵ. դարում Երուաղեմում հաստատորները կուսույթեան ուխտ են ընդունել Մաշտոցում նկարագրուած կարգով:

Ինչ վերաբերում նորագոյն ժամանակներին, ապա Կիրեն Ծ. Վրդ. Խորայէլեան իր գեկուցագրում նշում է միայն քոյն տուչքութեան մասին՝ յաեւելով, որ մայրապետերը «չունին որեւէ կարգ կամ ծեռնադրութիւն»<sup>37</sup>:

Այս առումնվ արժէ արձանագրել ուշագրաւ եսա մէկ փաստ: Երուաղեմը միակ վայրն է, որտեղ բոլոր ժամանակներում ապրել ու հայկական վանքերին իրենց ծառայութիւնն են մատուցել միանձնական կեանքին նորիրուած ուխտեալ կանայք: Հակառակ այս իրողութեան Ս. Յակոբեանց միարանութիւնում ծնոնպահ են մնացել սարկաւագուիու ծեռնադրութիւնից, անգամ՝ ԺԹ. դարում, երբ Հայ Եկեղեցուն ոչ-խորթ այս ծիսակարգը կրկին տարածում էր գտել Հայ Եկեղեցու կուսանոցներում, առանձին դէպէերում նաեւ Կ. Պոլսում:

Այս մասին յայսնի է, հետեւեալ պատմութիւնը.-

Թիֆլիսի Ս. Սուեփանոս Կուսանաց վանքի միանձնուիի Կատարինէ Ղորդանեանը 1850ականներին սուրբ վայրեր կատարած ուխտազնացութեան ընթացքում ցանկացել է իր սարկաւագական ծեռնադրութիւնը ստանալ Երուաղեմում: Սակայն, «Յովաննէս պատրիարք չէր համարձակած ծեռնադրել Կապարինէ օրիորդը՝ հակառակ նկադիրվ այդ բանը մեր Եկեղեցական կանոններուն»<sup>38</sup>:

Ուշադրութեան արժանի են նաև մայրապետերի ծառայութեանը Վերաբերող վարչական բնոյթի կարգաւորումները, որոնք եսա արտացոլուած չեն միարանութեան կանոնադրութեան մէջ:

Այսպէս, Ս. Հրեշտակապետացի մայրապետերը ղեկավարուած էին տեսուու վարդապետի կողմից: Միաժամանակ, ինչպէս կուսանոցներում ապրող կոյսերն ունեն իրենց միջից ընտրուած ղեկավարը՝ մայրապետը, այն-

պէս էլ Հրեշտակապետաց վանքի միանձնուիհներն իբրեւ գլուխ ունեին իրենցից ընտրուած տնտեսը: «Ա. Հրեշտակապետի վանուց մէջ կը բնակին Մայրապետը եւ յաշխարհի մեկուացեալ հասպատոր կանայք, որոնք սուրբ Յակովեայ միարանից պիտոյիցը կը ծառայեն եւ խնամք կը դասին նոցա մայրաբար. ունին իրենաց առանձին գիշատոր մի իրենց մէջէն ընպրուած, որ Տնտես կ'անուանի: Դարձեալ եկեղեցին Տեսուչ վարդապետի մի ծեռօր կը կառավարոյի»<sup>39)</sup> Կարդում ենք Երուսաղէմի ուղեցոյցներից մեկում:

Մայրապետերի նման աստիճանակարգի մասին են վկայում նաև Երուսաղէմի հայկական գերեզմանոցներում ամփոփուած մայրապետերի տապանագիր արձանագրութիւններ: Դրանցից առանձնացնենք միայն մէկը՝ 16 տարեկանում մայրապետերի կարգն անցած, ապա տնտեսի պաշտօն ստանձնած Շուրբանտառ անուամբ մայրապետի տապանագիրը. Շուրբանտառ Կոյս Առաքելեան Վարիչ իմբին իր ընկերաց,  
Գասապացի գայ ի Սարիմ, Փայլեան վարուք ժիր եւ համեստ:  
Ցանկայ վարուց սուրբ կուռուպեան, Եկեցաց յատրու եօթն վեհից  
Ի տան եւ վեց տիհ հասակին: Պատրիարքաց Արքյ Գահին,  
Մտեալ ի կարգ մայրապետաց, Եւ ցվաճման իր ծիգ կենաց  
Ապա կարգի տնտես եւ պետ, Վարեաց զպաշտօն գործովք բարեաց<sup>40</sup>...:

Մայրապետերն, իբրեւ վանքի ծառայողներ, առանձնացել են նաև իրենց յատուկ հանդերձանքով: Առկայ աղբիրների համաձայն՝ ժամանակի ընթացքում այն արտաքին փոփոխութիւնների է ենթարկուել պահպաներով, սակայն, իր միատիպութիւնը:

Այսպէս, ժէ. դարի Հ<sup>Յ</sup> 2291/70 Մաշտոցի լուսանցազարդում<sup>41</sup> պատկերուած են եպիսկոպոսից օրինութիւն ստացող ծնրադիր կոյսեր՝ միանման սեւ հանդերձանքով. ճակատը պարուրող գիշաշոր եւ սրբմի նմանութեամբ վերարկու: Երուսաղէմի միանձնուիհների հանդերձանքը այլ կերպ է նկարագրուած ժԸ. դարի աղբիրը՝ համեմատելով այն այլ վայրերի հայ կոյսերի հանդերձանքի հետ.

Պարսկաստանի եւ քանի մը այլ վայրերու հայ կոյսերը կամ միանձնուիհները. ճիշտ նոյն ծնուլ կը հագուին ինչ որ կնդրուատը վանականները. միայն մօրուքով կը զանազանուին իրամը: Մինչքեն Երուսաղէմի եւ քանի մը ուրիշ վայրերու կոյսերը՝ փոխանակ կնդրուի, իրենց գլուխին շուրջ ունին կապուատն (իտլ. turchina) քոլ մը. որոն ծայրամասերը հասաւը կերպով կիշնեն կործին եւ ուտերուն վրայ. ծնուի տակ գնդասեղող մը հաստատուած: Կը կրին նոյն գոյսով՝ կապուրակ տարատներ, որոնք կիշնեն մինչեւ կրումը<sup>42</sup>:

Առաել պարզ նկարագրութիւն ունի Երուսաղէմի մայրապետերի հանդերձանքը նորագոյն ժամանակներում. «Կը կրեն վերարկու եւ սեւ քոյ, որը կը գրուի պահպանիցի օրինութեամբ»<sup>43</sup>:

Վերջում յաելենք, որ Ս. Հրեշտակապետաց վանքի մայրապետանոցն այսօր արդէն դատարկ է:

1944ին, ինչպես նշում էր Կիւրեղ Շ. վարդապետը, Երուաղեմի Ս. Աթոռում մայրապետորի թիւը 15 էր: Իսկ վերջին մայրապետի մահագոյն գետեղուած է 1989ի Միունի վերջին համարում.

23 Դեկտ., Շաբաթ օր, իր յախտենական հանգիստը մտաւ Ս. Ովստիս վերջին Մայրապետ՝ Տիրուի Կարապետեան, Թուակյալի (Եմնաու) ծերանցին մէջ, որը փոխադրուած էր քանի մը ամիսներ առաջ իր յառաջացեալ տարիին և խարիսխած առողջութեան համար:

Ծնած է Պոլիս 1910ին և 1960ին մտած է ի շարս մայրապետաց Ս. Աթոռոյս<sup>44</sup>:

Միունի նոյն համարում վերջին մայրապետի անունը կրկին հանդիպում է բարեպաշտ Նովիատոնների ցանկում. «Տիրուի Մայրապետ Կարապետեան»<sup>5</sup> Ս. Գերեզմանի համար ասեղնագործ ծածկոց մը եւ դրան ասեղնագործ վարագոյն մը»<sup>45</sup>:

## ԾԱԸՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup> Հեղինէ Մկրտչեան, «Սուրբ Կայիրերում Հայ Եկեղեցու Կուսանցների Գոյութեան Հարցը», Հայկագեան Հայագիրական Հանդէս, Հգր. Լթ., Պեյրութ, 2019, էջ 693-702:

<sup>2</sup> ԺԵ. Դարրում «մայրապետ» անուանում արդէն իսկ գործածութ է, որի մասին վկայում է 1419ին Երուաղեմի Ս. Յակոբ Եկեղեցում ընդօրինակուած ճառընթիրի յիշատակագիրը. «Այ եւ ... մայրպետ ... շար աշխարիք է ի սպասատրոցինն...» (Մայր Յուղակ Ձեռագրաց Արքոց Յակոբեաց, Հգր. 1, կազմ.՝ Նորայր Եպս. Պողարեան, Երուաղեմ, 1966, էջ 40):

<sup>3</sup> Մաղարիս արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապարում, Հգր. 3, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 5077:

<sup>4</sup> Ըստ Եկեղեցական աանդրտեան՝ առաջին քիչտոնեայ թագաւորն է Հայ Եկեղեցու տօնելի սրբիցից: Պատմագիտութեան մէջ Արքարի հայ լինելու փաստը, որ հանդիպում է միայն Խորենացու մօտ, համարում է վիճելի: Խորենացու պատմութինը հասատի է համարում Միքայէլ Վրդ. Չամչեանը (Պատմութին Հայոց, Հգր. Ա, Աննետիկ, 1784, էջ 569-78): Ըստ Օրմանեանի՝ «Արքարին Հայոց թագաւոր լինելը արդարին և ժամանակակից պատմութեան զի համապատասխանը» (Ազգապարում, Հգր. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 4-6): Պատմաբան Բարձրէն Յարութինեանը եւս մերժում է Արքարի հայ լինելը՝ նշելով, որ «Լարութեայի Արքարը եւ հայոց պարմահօր յիշարակած Արքարը դարբեր անձինք են, իսկ կրած նոյնացումը՝ յոկ Սովուս Խորենացու միայ եղուակացութեան արդինքը» (Քրիստոնեայ Հայաստան, 2002: 22(138)-24(140), Նոյեմբեր Բ.-Նեկտարեր Բ., 2003:1(141)-3(143), Յունուար Ա.-Փետրուար Ա.:

<sup>5</sup> 1924ի Արեւուս հրապարակուած հայ կայուիկ Սերովիք Եպս. Դայթանի նամակում յայտնում է, թէ Ֆրանսիացի հնագէտ ոք Սուլին (de Saulcy) 1863-4ին Երուաղեմում պեղուաներ կատարելիս յայտնաբերել է Հեղինէ թագուհու գերեզմանը, որի եբրայերէն արձանագրութիմը հասատում է Հեղինէի՝

Եղեսիայի հայոց Արգար թագաւորի ամուսինը լինլու պատմութիւնը: Մեր կողմից յատենք, որ ֆրանսիացի հետազոտն իր հրապարակումներում չի նշում Արգարի կամ Հեղինէի հայ լինելը: Նրա մի աշխատութիւնում միայն անդրադարձ կայ Խորենացու՝ *Պարմութեանը՝ Կապուած Հեղինէ թագուհու շրմի տեղագործեան* հետ (Արեւ, 1924, Մայիս 16, հմն.՝ Պարմութիւն Կամ Ռուզեցոյց Արքազան Տեղաց, Երուաղին, 1872, էջ 209-11, նաև՝ F. de Saulcy, *Voyage en Terre Sainte, Հյուր, 1, 1865, էջ 138-42, 387-96. նաև՝ F. de Saulcy, Recherches sur l'Emplacement Véritable du Tombeau d'Hélène, Reine d'Adiabène, Paris, 1869):*

<sup>6</sup> Սովորել Խորենացի, *Պարմութիւն Հայոց*, ընն. թագիր եւ ներած.՝ Մ. Արենեան եւ Ս. Յարութիւնեան, Երեան, Հայութիւնատ, 1961, էջ 160: Հեղինէ թագուհու մասին տեսն նաև՝ Զամշեան, էջ 296, 589-91. նաև՝ Տիգրան Հ. Թ. Սաայանեանց, *Պարմութիւն Երուաղիէին*, Երուաղին, 2000, էջ 143-5, 1189-90:

<sup>7</sup> Իշխանուհու կրօնական կեանքին նոփրուելու երուաղէնում թարուած լինելու մասին է վկայում նաև՝ Գանձասարի Վանքի արձանագրութիւնը. «...Եւ յսիկ լուսամիքին արթեսից՝ մայրն իմ կրօնատրեալ չոգան յերուաղիէմ, երրորդ աեզամ. եւ անդէն ի դրան Յարութեան խարագնազեաց զգեստեամբ. բազմամեայ ժուկապութեամբ հանգսան ի Քրիստոս տուոյ վկայութեամբ եւ անդէն պահեցան»: Այս արձանագրութիւնը հիմք ընդունելով՝ Աղոանից մետրոպոլիտ Բաղդասար Արք. Հասան Զապահանցը 1849ին նամակով դիմել է Երուաղիմի հայոց Կիրակոս պատրիարքին՝ խնդրելով իրեն փոխանցել Երուաղէնում պահպանուած որեւէ իշխանակազրութիւն (տապանագիր կամ այլ արձանագրութիւն): Սակայն սրբազնի հետարքութեանը որեւէ գոհացու չի տրուել (Ակրոիծ եպս. Աղանունի, Միարանք եւ Այցելու Հայ Երուաղիէի, Երուաղին, 1829, էջ 181, հմն.՝ Դիան Հայ Վկանագրութեան, Հյուր. 5, կազմ.՝ Ս. Բարիուտարեան, ԳԱ Հրատ., Երեան, 1982, էջ 38. նաև՝ Սիոն, «Արձանագրութիւն Գանձասարյա Վանքի Եկեղեցւոյն», Երուաղին, 1867 Փետրուար, էջ 27-28):

<sup>8</sup> Կիրակոս Գանձակեցի, *Պարմութիւն Հայոց*, Թիֆլիս, Տպ. Օր. Ն. Աղանեանցի, 1909, էջ 254-5:

<sup>9</sup> Մարիամ թագուհու անուան շորջ կան մի շարք տարակարծութիւններ: Զամշեանը Լեռն էի ամուսնութեան մասին գրում է. «Եւ առեալ էր իսր կին՝ Մարիամ անու բազգականութէ Լուովիկոսի թագաւորին Հռովարդոյ» (Միարել Վ. Զամշեան, *Պարմութիւն Հայոց*, Հյուր. 4., Վենետիկ, 1786, էջ 356): Ըստ Յովհաննէս Դարդէի՝ Լեռն էն ամուսնացել է Կիարոսի իշխանի դուստր Մարգարիտի հետ. «Եւ եղել իրբե եկես իշխանն Լեռն զի էանց ժամանակն սահմանեալ ամուսնութեանն իսրոյ որ ի Սորէա, զի էլք նմա այլ եան հեար գեայ ամուսնալ ընդ դիկուոչ այնմիկ, եան իսր ի կնութին զայրի ոմն դիկին ի Կիարոս, որ անուանեալ կոչէր դիկին Մարգարիտ Սուասոն, դուստր Տեառն Յովհաննու Սուասոն, որ էր պարու Կիարոսի, յամի Տեառն 1369, յամեանն Սայիսի» (Յովհաննու Դարդէի Ժամանակագրութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 63): Կ. Բասմանեանը առաւել հաւասի է Ակրեկի պատմութիւնը. «Լետոնի կիեց զուր ֆրանսիացի էր, այսինքն՝ Սուասոնի (Ֆրանսա) ազնուական ցեղէն Ֆամագուստայի Յովհաննէս պային աղջիկը՝ Մարգարիտ, որոն առաջին ամուսինն եղած էր Humfroy de Scandeline»: Բասմանեանը նշում է թէ՝ «Մարիամ»

- Կոսպատիին Գ.ի կինն էր, որ շփոթուած է Մարգարի հետ» (Կ. Յ. Բասմանեան, *Լեռն և Լուսինեան*, Վերջին Թագաւոր Հայոց, Պարիս, 1908, էջ 40, 53):
- <sup>10</sup> Երուաղեմի միաբան Սերովիք Վրդ. Ասմուկեանը Բասմանեանին ուղած նամակում յայտնում է, որ «1896-ին ս. Գյասարի մագրան մէջ Երողութիւններ կարարուած միջոցին երկու գերեզմաններ գտնուեցան, երկուք ալ առանց իշխափակարանի, որոնք կը կարծուին Մարիամի եւ Ֆիմիի գերեզմաններն ըլլար»: Բասմանեանը հասանական համարելով այդ ենթարդութիւնը, վկայակողու է Մարտիրոս Ղրիմեցուն՝ «Թաղի ընդ սեամբ սովոր փաճարին, Հայոց ազգի սովոր պօռոին» (Բասմանեան, էջ 57-58):
- <sup>11</sup> Սաապանեանց, էջ 526-27. հանը. Դամեսան, Պագմոնին, Հյոր. Գ., էջ 364:
- <sup>12</sup> Հեղինէ Սկրտչեան, «Հայկական Ձեռագրերի Յիշատակարանները Կանանց Սենատուանների եւ Կուսակրօն Կանանց Վերաբերեալ», էջմիածին, 2012:ԺԲ., 2013:Բ.:
- <sup>13</sup> Մայր Յուղակ Ձեռագրաց Արքոց Յակորեանց, Հյոր. 2, կազմ.՝ Նորայր Եպս. Պողարիսան, Երուաղեմ, 1967, էջ 79:
- <sup>14</sup> ԺԴ. Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշափակարաններ, կազմ.՝ Լ. Խաչիկեան, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., Երեան, 1950, էջ 168-69:
- <sup>15</sup> Մայր Յուղակ Ձեռագրաց Արքոց Յակորեանց, Հյոր. 6, կազմ.՝ Նորայր Եպս. Պողարիսան, Երուաղեմ, 1972, էջ 261:
- <sup>16</sup> Մայր Յուղակ Ձեռագրաց Արքոց Յակորեանց, Հյոր. 7, կազմ.՝ Նորայր Եպս. Պողարիսան, Երուաղեմ, 1966, էջ 10:
- <sup>17</sup> Նոյն, էջ 33:
- <sup>18</sup> Նոյն, էջ 39:
- <sup>19</sup> ԺԵ. Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշափակարաններ, Հյոր. 1, կազմ.՝ Լ. Խաչիկեան, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., Երեան, 1955, էջ 325:
- <sup>20</sup> Նոյն, էջ 300. Նաեւ՝ Մկրտչեան, «Հայկական Ձեռագրերի», էջ 105:
- <sup>21</sup> Սկրտչեան, «Սուրբ Կայրեղուան», էջ 696-7:
- <sup>22</sup> Գիրք Պագմոնթան Արք եւ Ամօքի Քաղաքի Աստուծոյ Երուաղեմին, եւ Արքոց Տօրինականաց Տեղաց Տեառն Մերոյ Յիշուակ Քրիստոսի, Կ.Պոլիս, Տպ. Մայրաւոն, 1807, էջ 239:
- <sup>23</sup> Մատթեոս Ուհայեցի, Պագմոնին, Երուաղեմ, 1869, էջ 337-8:
- <sup>24</sup> Նոյն, էջ 338:
- <sup>25</sup> Միջինարայ Ալրիվանեցոյ Պագմոնթին, ի լոյս ընծայեաց Ք.Պ. Ս. Պետերովոց, 1867, էջ 76:
- <sup>26</sup> Վ. Հացոնի, Հայուիին Պագմոնթեան Աղօն, Հեղինակային Հրատ., Երեան, 2007, էջ 128-29:
- <sup>27</sup> Կանոնագիրը Հայոց, Հյոր. Ա., աշխատ.՝ Վազգէն Յակորեան, ԳԱ Հրատ., Երեան, 1964, էջ 489:
- <sup>28</sup> Վարդան Հացոնի, «Կուսաստանը Հայաստանի Ալէց», Բազմավէս, 1923, Մարտ, էջ 75:
- <sup>29</sup> Նոյն, էջ 74-5:
- <sup>30</sup> ԺԵ. Հայերէն, էջ 561-2:
- <sup>31</sup> Հացոնի, «Կուսաստանը», էջ 74-5:

- 
- <sup>32</sup> Կանոն Միաբանական Ուխտին Առաքելական Աթոռոյ Սրբոց Յակովութեանց Ի Սուրբ Երուսաղէմ, Երուսաղէմ, 1939, էջ 2: Մեր ծերոիդ տակ է նաև կատնադրութեան 1887ի հրատարակութիւնը:
- <sup>33</sup> 1908ին Մադաֆիա Արք. Օրմանեանը Ներկայացրել է կանոնադրութեան վերաբերեայ նոր առաջարկութիւններ՝ նպաստակայարմար տեսնելով «աշխագուտութեան եւ մայրապետութեան վիճակը առանձին կատնագիրով կարգադրել» (Մադաֆիա Արք. Օրմանեան, Ազգակարում, Հդր. 3, Մայր Արքու Ս. Էջմիածին, 2001, էջ 5712):
- <sup>34</sup> Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պարմութեան, Գիր 2, Գէորգ 2 Զորեցէան, Երևան, «Ուսկան Երեանց» Հրատ., 1999, էջ 230:
- <sup>35</sup> Մայր Յուղակ Յեռազրոց Սրբոց Յակովութեանց, Հդր. 4, կազմ.' Նորայր Եպս. Պողարհան, Երուսաղէմ, 1969, էջ 241:
- <sup>36</sup> Երուաղէմի մատենադարան, ձեռ. Հմr 2291/70 «Մաշտոց», էջ 128-130ա: Տե՛ս նաև՝ Հենին Ակրտչեան, «Կանանց Կոստումն Ուստի Նորայրու Կարգ Երուաղէմի ժե. Դարի Մաշտոցում», Էջմիածին, 2015:Ա., էջ 34-43:
- <sup>37</sup> Վաւերագրեր, էջ 230:
- <sup>38</sup> Սալահանեանց, էջ 1131-2:
- <sup>39</sup> Պարմութիւն Կամ, էջ 113. հմմ.՝ Համառօք Պարմութիւն Կամ Ուղեցոյց Սրբազն Տնղեաց, Երուսաղէմ, 1888, էջ 155:
- <sup>40</sup> Սալահանեանց, էջ 1287:
- <sup>41</sup> Հմr 2291/70 Մաշտոց, էջ 129ր., հմմտ., Էջմիածին, 2015:Ա., գունաւոր Ներդիր:
- <sup>42</sup> Հայր Տաճառ Եարտըմեան, Նիսեր Հայ Վանականութեան Պարմութեան (ԺԴ.-Ժ. Դար), Վենետիկ-Ս. Ղազար, 1989, էջ 26:
- <sup>43</sup> Վաւերագրեր, էջ 230:
- <sup>44</sup> Մահապատճեան «Տիգրոսի» բաժնում, Սիոն, Հոկտ.-Նոյեմ.-Դեկտ., 1989, էջ 242:
- <sup>45</sup> Նոյն:

NUNS OF THE ARMENIAN CONGREGATION OF ST. JAMES AND THEIR SERVICE  
(Summary)

HEGHINE MKRTCHYAN  
heghmk@yahoo.com

There is a great deal of evidence about the existence of Armenian nuns in the holy lands. Their presence goes back several centuries and continues till the end of the 20<sup>th</sup> century. The earliest evidence known concerning the Armenian nuns of Jerusalem is found in manuscripts dating back to the 14<sup>th</sup> century. In the charter of the St. James Congregation of Jerusalem, adopted in the late-19<sup>th</sup> century, nuns are considered as Congregation members. Nonetheless, living in the monastery of the Holy Archangels, their by-laws were not typical to the rules of convents.

Indeed, for the last six centuries nuns have served the Armenian monks of Jerusalem, taking care of their daily needs. The nuns' service, however, went beyond that as they also undertook the post of sacristan of the Tomb of the Virgin Mary.